Ռուբեն Սևակ

Սիրո աղբյուր

Ահա՛ կուգամ երջանկության ակերեն,
Արյունըս դեռ երազորեն կը հեւա
Ու արցունքներ արտեւանունքըս կ'այրեն:

Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, ի՛նչ հրրճվանքով տենդագին
Երկարեցի թըշվառ շրթներըս ակիդ
Ու ի՛նչ սիրով ըմպեցի ջո՛ւրըդ անգին:

Ոհ, կուզեի մընալ հավետ ակիդ քով,
Նիհար ճակատս կոթնցընել քու քարիդ.
Թաղվիլ ջուրիդ երջանկությա՛ն պատանքով:

Ու կուզեի հալիլ կուրծքիդ մեջ անհետ,
Լույծ մարմնույդ մեջ կաթի՛լ մ'ըլլալ, կե՛տ մ'ըլլալ,
Երգե՛լ, հեւա՛լ, քեզի նըման, քեզի հետ:

Ի՛նչ մոգություն կար մարմինիդ մեջ համակ,
Ի՛նչ կ'ըսեին ալիքներըդ վազելով,
Ու ի՛նչ հմայք կար փրփուրիդ մեջ ճերմակ:

Շրթունքս դեռ քեզ կը փնտռեն տենդագին,
Ու հրրատապ այտերես վար մեղմորեն
Դողդըղալով կը սահի ցո՛ղը կյանքին...

Ահա կուգամ երջանկության ակերեն: